ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՈՒՏՔՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ

1914թ. օգոստոսին, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Թուրքիան անմիջապես չմասնակցեց դրան: Չնայած նրան, որ բացի Իտալիայի հետ պատերազմից նա նոր էր դուրս եկել նաև Բալկանյան պատերազմներից, ստեղծված իրավիճակում Թուրքիան պարզապես փորձում էր դաշնակցել հակամարտող այն կողմին, որն առավել կաջակցեր իր ներքին խնդիրների վերացմանն ուղղված նպատակների իրականացմանը:

Ինչպես հայտնի է՝ Բալկանյան պատերազմներում Թուրքիան բավական լուրջ կորուստներ ունեցավ՝ կորցնելով իր եվրոպական տարածքների մեծ մասը և տեղի մուսուլմանական բնակչությանը պարզապես վերաբնակեցրեց արևելյան Անատոլիայի հայկական տարածքներում: Օսմանյան կայսրությունն ամբողջովին գտնվում էր եվրոպական տերությունների ազդեցության տակ: Նրա տարածքները գտնվում էին եվրոպական գերտերությունների ազդեցության ոլորտներում: Միակ «ազատ» տարածքը դեռևս մնացել էր Միջին Արևելքը, որի նկատմամբ տերությունները ևս սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել: 1914թ. ընթացքում կնքվեցին մի շարք պայմանագրեր, որոնցով հաստատվում էին գերտերությունների ազդեցության գոտիները նաև այս տարածաշրջանում: 1914թ. փետրվարի 15-ին Ֆրանսիան երկար բանակցություններից հետո, կարողացավ համաձայնության գալ և Գերմանիայի հետ կնքել մի պայմանագիր, որով Կիլիկիան և Սիրիան՝ Հոմսից մինչև Դեր-ես-Զոր՝ Եփրատի երկայնքով հայտարարվեցին ֆրանսիական ազդեցության գոտի, իսկ Անատոլիա-Բաղդադ երկաթուղու ողջ տարածքը, բացի Ալեքսանդրիայից Հալեպ ընկնող չեզոք գոտի հայտարարված 60 կիլոմետրը, անցավ Գերմանիայի հսկողության տակ:[1] Այս պայմանագրի կնքումից հետո Ֆրանսիան ձեռնամուխ եղավ իր իրավունքները վերահաստատել նաև Թուրքիայի հետ պայմանագիր կնքելով: 1914թ. ապրիլի 9-ի ֆրանս-թուրքական պայմանագրով որոշվեցին Ֆրանսիայի իրավունքները Սիրայում, բացի դրանից

ֆրանսիական ազդեցության գոտիներ ճանաչվեցին արևմտյան Անատոլիան և Հայաստանը[2], որտեղ Ֆրանսիան նախ և առաջ ցանկանում էր սահմանակցել ռուսական ազդեցության գոտուն:

Իրենց ազդեցության գոտիները ճշտելու համար 1914թ. հունիսին պայմանագիր կնքեցին նաև Գերմանիան և Անգլիան: Վերջինս տվեց իր համաձայնությունը, որպեսզի Գերմանիան կառուցի Բաղդադի երկաթուղու մինչև Բասրա ընկած հատվածը, որի դիմաց Գերմանիան ճանաչեց Պարսից ծոցի վերահսկողության Անգլիայի իրավունքները:

Եվրոպական գերտերությունների հսկողության տակ էին գտնվում նաև թուրքական ֆինանսական միջոցները: Դեռևս 1881թ. սուլթանը ստիպված էր մի որոշում կայացնել, որով եվրոպացիներին էր հանձնում միլիոնների հասնող երկրի հանրային պարտքի տնօրինումը, քանզի կայսրությունն ի վիճակի չէր այն հսկել:[3] Ստեղծվեց աշխատանքային մի խումբ, որը լիազորված էր տնօրինելու երկրի տնտեսության մոտ մեկ քառորդը: Մասնավորապես այս խմբին էին պատկանում հարկային ու մաքսային դաշտում որոշումներ կայացնելու իրավունքը և այնպիսի ապրանքների վերահսկողությունը, ինչպիսիք էին աղը, ձուկը, ծխախոտը, ալկոհոլը և այլն: Փաստորեն, Բարձր Դուռն այլևս իր հարստության տերը չէր: Բացի այդ, Օսմանյան կայսրությունը փաստորեն կապիտուլիացիայի էր ենթարկվել, այսինքն գործում էին այնպիսի միջազգային պայմանագրերի դրույթներ, որոնցով կայսրության տարածքում կարգավորվում էին օտարերկրացիների դիքերն ու արտոնությունները: Թուրքիայում գտնվող գրեթե յուրաքանչյուր ազգ ուներ իր դատարանը, դպրոցը, կրոնական հաստատությունը, որոնք դուրս էին կայսրության օրենսդրական դաշտից: Այսպիսի պայմաններում եվրոպական երկրների դեսպանները հանգիստ կարողանում էին միջամտել կայսրության ներքին քաղաքականությանը:[4] Նրանք էին իրականացնում նաև ոչ մուսուլման ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Եվրոպական յուրաքանչյուր գերտերություն, իր շահերի և ազդեցությունների ոլորտն ընդգրկող տարարածքներում, խնամակալում էր որևէ ազգային փոքրամասնության, որն էլ հնարավորություն էր տալիս նրանց առավել միջամտել Թուրքիայի ներքին խնդիրներին: Այսպիսով՝ Ֆրանսիան ի սկզբանե, դարեր շարունակ, հանդիսանում էր արևելքի կաթոլիկների պաշտպանը, Ռուսաստանը՝ բալկանյան երկրների, իսկ Անգլիայի խնամակալության տակ էին գտնվում Օսմանյան կայսրությունում բնակվող հրեաները: Այս երեք երկրները համատեղ, կամ առանձին-առանձին, երբեմն զբաղվում էին նաև հայ ժողովրդի պաշտպանությամբ, սակայն այն դեպքում, երբ այն անմիջականորեն առնչվում էր իրենց քաղաքական շահերին:

Ռուսաստանը, որի արտաքին քաղաքականության հիմնախնդիրներից էին Օսմանյան կայսրության հետ հարավային Կովկասում ապահով սահման ունենալը և Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները հսկելը, 1912 թվականից վերսկսեց զբաղվել հայերի խնդիրներով: Հայ ժողովուրդն ինչպես միշտ խանդավառությամբ ընդունեց ցարական կայսրության հայանպաստ քաղաքականության վարումը հարավային Կովկասում: Հոկտեմբերին Գևորգ V կաթողիկոսը Կովկասի փոխարքա Վորոնցով Դաշկովի

հետ հանդիպման ժամանակ, իր և հայ ժողովրդի հավատարմությունը հայտնեց ռուսական գահին և խնդրեց, որպեսզի անհապաղ սկսեն զբաղվել Օսմանյան կայսրության հայերի ճակատագրով: Նոյեմբերին Թիֆլիսում հավաքվեցին Ռուսաստանի հայ համայնքի կարկառուն ներկայացուցիչները, որոնք իրենց աջակցությունը հայտնեցին կաթողիկոսի նախաձեռնությանը:

Նոյեմբերի 30-ին Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը դիմեց Կ. Պոլսի ռուսական դեսպան Ժիրեսին, որպեսզի վերջինս դիմի Բարձր Դռանը հայկական վիլայեթներում անհապաղ բարեռորոգումներ անցկացնելու պահանջով՝ զգուշացնելով նաև, որ պահանջն անտեսելու դեպքում ոչ միայն հնարավոր կլինի եվրոպական երկրներ միջամտությունը, այլև չեն բացառվի ընդհանուր սահմանում տհաճ միջադեպերը:[5] Իրականում Ռուսաստանը ցանկանում էր միայնակ զբաղվել այս խնդրով՝ առանց որևէ եվրոպական տերության ներգրավման, սակայն, երբ տեղի տալով ռուսական ճնշումներին օսմանյան կառավարությունը խոստացավ սկսել բարեփոխումների ծրագիր մշակել՝ դիմեց թե՛ Անգլիայի և թե՛ Ֆրանսիայի կառավարություններին՝ բարեփոխումների ծրագիրը համատեղ մշակելու և իրականացնելու խնդրանքով: Թուրքական կառավարության նման քայլը բացատրվում է նրանով, որ չնայած երկիրն ամբողջությամբ գտնվում էր եվրոպական երկրների ազդեցության տակ, բայց թուրքական կառավարությունը փորձում էր որևէ երկրին, որևէ կոնկրետ ոլորտում, իսկ հայկական շրջաններում բարեփոխումներ անցկացնելու հարցում առավել ևս, մենիշխանություն չտալ, շատ լավ գիտակցելով, որ երբ մի քանի գերտերություն են միաժամանակ զբաղվում այդ հարցով, ապա նրանց միջև շահերի բախումն այն աստիճանի է հասնում, որ միշտ ձախողվում են կոնկրետ քայլերը:

Ստեղծված իրավիճակում, բնական է, Ռուսաստանն այլևս չէր կարող միայնակ բանակցել Թուրքիայի հետ և հարաբերությունները եվրոպական երկրների հետ չսրելու համար դիմեց Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Բեռլինի և Հռոմի իր դեսպաններին, որպեսզի նրանք պարզեն տերությունների դիրքորոշումն ու հետաքրքրությունը՝ բարեփոխումների հարցում: Անգլիան և Ֆրանսիան, իրենց հերթին, լավ հասկանալով, որ Թուրքիայի առաջարկը մերժելը նրան ուղղակի կնետի Գերմանիայի գիրկը, գիտակցելով նաև Ռուսաստանի դերն ու նշանակությունը, ինչպես նաև՝ հատուկ շահերն այդ տարածաշրջանում, հարաբերությունները Ռուսաստանի հետ չլարելու համար դիմեցին երկիմաստ դիվանագիտական մի քայլի. Անգլիայի արտգործնախարար Է. Գրեյը Սազոնովին երկու տարբերակ առաջարկեց.

ա. Ռուսաստանն ուղղակիորեն բանակցություններ էր սկսում Թուրքիայի հետ հայկական տարածքներում բարեփոխումների հարցի շուրջ՝ հիմք ընդունելով 1895թ. մայիսյան բարեփոխումների ծրագիրը, և երբ ընդհանուր համաձայնություն ձեռք բերվեր, այն պետք է հաստատվեր նաև մյուս տերությունների կողմից, որից հետո Ռուսաստանը Կ. Պոլսի վեց դեսպանատներին պետք է վստահեր Թուրքիայի մյուս վիլայեթներում բարեփոխումների մշակման հարցը, կամ,

բ. հենց սկզբից, բոլոր տերությունները իրար հետ սկսում են մշակել ողջ Թուրքիային առնչվող բարեփոխումների մի ընդհանուր ծրագիր:"

Այս առաջարկով, չնայած նրան, որ Ռուսաստանին էր թողնվում նախաձեռնությունը, սակայն, փաստորեն, վերջնական արդյունքում նա միայնակ որոշում չէր կարող կայացնել: Սազոնովը, գիտակցելով, որ երբ հարցն արդեն միջազգային հնչեղություն է ստացել, Ռուսաստանի անմիջական բանակցությունները Թուրքիայի հետ, անտարակույս, կառաջացնեին Գերմանիայի բացահայտ դժգոհությունը, համաձայնություն տվեց երկրորդ տարբերակին՝ հանձնարարելով Ժիրեսին մի ծրագիր կազմել և ներկայացնել Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին: 1913թ. հունիսի 9-ին Ժիրեսն Անգլիայի և Ֆրանսիայի իր գործընկերներին ներկայացրեց մի ծրագիր, որի համաձայն հայկական վեց վիլայեթները միավորվելու էին վարչական մեկ միավորի մեջ, որը վարչականորեն պետք է անջատված լիներ թուրքական կառավարությունից և պետք է ղեկավարվեր թուրքահպատակ քրիստոնեայի, կամ մի եվրոպացու կողմից, որին հաստատելու էր սուլթանը: Այլ դրույթներով հաստատվելու էին լեզվի և կրոնի ազատություն, օրենքի առջև քրիստոնեաների և մուսուլմանների հավասարություն և այլն: Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններն առաջարկեցին ստեղծել մի հանձնաժողով, որը կքննարկեր այս ծրագիրը: Գերմանիան տեղեկանալով այս գործընթացներին ինքը ևս սկսեց հետաքրքրություն ցուցաբերել, իսկ արտաքին գործերի պետքարտուղար Զագովը, Բեռլինում Ռուսաստանի դեսպան Զվերեբեևին տեղեկացրեց, որ քննարկումներին անպայման պետք է մասնակցի նաև Բարձր Դռան ներկայացուցիչը: Սազոնովը նոր էր մերժել Զագովի առաջարկը, երբ նման առաջարկով հանդես եկավ նաև Անգլիան: Ակնհայտ էր, որ եվրոպական տերություններն ամեն ինչ անում էին խոչընդոտելու համար Ռուսաստանի գործողությունները, քանի որ այդ շրջանում նրանց այնքան էլ չէր հուզում հայերի խնդիրը, բայց և Ռուսաստանին գործողությունների ազատություն տալը նույնպես անթույլատրելի էր նրանց համար: Իսկ Գերմանիայի դեսպան Վանգենհեյմը Թուրքիայում ավստրիական ռազմական պատվիրակության ղեկավար Ջ. Պամիանկովսկուն ուղղակի հավատացնում էր, որ տերությունների ջանքերը հայկական խնդրում անօգուտ են, իսկ հայերի փրկության միակ ելքը մահմեդականության ընդունումն է:[7] Գերմանիան իր հերթին սկսեց լուրեր տարածել, որ Ռուսաստանը ցանկանում է անկախ Հայաստան ստեղծել, իսկ դա շատ էր անհանգստացնում եվրոպական երկրներին, քանի որ դրանով կսկսվեր Օսմանյան կայսրության մասնատման գործընթացը: Թուրքական կառավարությունը ևս ձեռքերը ծալած չէր նստել և նույնպես ցանկանում էր ճախողել եվրոպացիների և, մասնավորապես, Ռուսաստանի ծրագրերը: Այդ նպատակով Բարձր Դուռը վարչական բարեփոխումների մասին մի որոշում ընդունեց, որով երկրի ողջ տարածքը բաժանվում էր վեց շրջանների, իսկ Թալեաթն առիթից օգտվելով հայերին «պաշտպանելու» համար ցանկանում էր էր յոթ հազար թուրք զինվոր ուղարկել հայկական շրջաններ:" Բացի դրանից, իր կորցրած տարածքների բնակչությանը վերաբնակեցնելով արևելյան շրջաններում, թուրքական կառավարությունը ցանկանում էր մարդահամար անցկացնել՝ ցույց տալու համար, որ Սվազի, Խարբերդի և

Դիարբեքիրի շրջաններում մուսուլմանները մեծամասնություն են կազմում, իսկ մյուս շրջաններում՝ հավասար են քրիստոնյա բնակչությանը:

Հուլիսի 3-24-ը Յենի-Քյոլի գերմանական դեսպանատան նստավայրում, բարեփոխումների ծրագրի քննարկման համար ստեղծված հանձնաժողովն ութ նիստ գումարեց, որի ընթացքում Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի պատվիրակներն առաջարկեցին նախ՝ քննարկել թուրքական ծրագրիրը, ապա միայն՝ Ժիրեսի առաջարկածը, որի հեղինակը Ռուսաստանի դեսպանատան աշխատակից Ա. Մանդելշտամն էր: Տարաձայնություններն այնքան մեծ էին, որ գրեթե առանց կոնկրետ որոշում կայացնելու հանձնաժողովի աշխատանքները դադարեցվեցին: Այս ձախողումը բացատրվում է ոչ միայն Եռյակ միության երկրների, այլ նաև՝ Անգլիայի և Ֆրանսիայի դիքորոշմամբ, որոնք չէին ցանկանում Թուրքիայի արևելյան շրջաններում «ստատուս քվոյի» որևէ խախտում արձանագրել, որը հնարավորություն կտար Ռուսաստանին հասնելու Միջերկրական դուրս գալու իր նպատակին: Ստեղծված իրավիճակում Սազոնովը Ժիրեսին կարգադրեց ուղիղ բանակցություններ սկսել Գերմանիայի դեսպան Վանգենհեյմի հետ և համաձայնության գալուց հետո միայն տեղյակ պահել մյուս տերությունների դեսպաններին: Սրանց միջև որոշակի համաձայնության եզրեր գտնելուց հետո, եվրոպական տերությունները վերսկսեցին հայկական շրջաններում բարեփոխումների մասին ծրագրի քննարկումները և, ի վերջո, կարողացան գալ ընդհանուր հայտարարի ու 1914թ. փետրվարի 8-ին Մեծ վեզիր Սայիդ Հալիմի և ռուսական գործերի հանձնակատար Գուլկևիչի միջև, որը լիազորված էր տերությունների կողմից, կնքվեց երկար սպասված պայմանագիրը, որով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայկական շրջաններում: Այդ նպատակով ստեղծվելու էին երկու գոտիներ. առաջինն ընդգրկելու էր Տրապիզոնի, Սվազի և Էրզրումի, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները: Ցրվելու էին համիդեան խմբերը, ձևավորելով պահեստային հեծելազորը, քրիստոնեաներն ու մուսուլմանները հավասար էին ճանաչվելու օրենքի առջև, հայկական դպրոցների առջև սահմանափակումներ չէին լինելու, հայոց լեզուն ընդունելի էր լինելու դատարաններում և վարչական մարմիններում, ստեղծվելու էր հայ-թուրքական ընդհանուր ոստիկանություն՝ առանց քրդերի մասնակցության: Ապրիլին, ստեղծված շրջաններում բարեփոխումների իրականացումը հսկելու նպատակով, վերահսկիչներ նշանակվեցին հոլանդացի Լ. Վեստենենկն ու նորվեգացի Ն. Հոֆֆը: Թվում էր, թե վերջապես ստեղծվել էին բոլոր նախապայմանները բարեփոխումների իրականացման համար: Սակայն Թալեաթն այն ձախողելու համար, խախտելով բոլոր տեսակի օրենքները, առանձին պայմանագիր կնքեց Վեստենենկի և Հոֆֆի հետ, որով թուրքական կառավարությանն էր վերապահվում նրանց լիազորությունների ժամկետի որոշման իրավունքը, և որ ցանկացած պահի թուրքական կողմը կարող էր չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը:[9] Փաստորեն՝ եվրոպական վերահսկիչներից նրանք վերածվեցին պարզապես թուրքական կառավարության իրավասության տակ գտնվող հանձնակատարների և մեկնեցին իրենց շրջանները, Հոֆֆը՝ Վան, Վեստենենկը՝ Էրզրում:

Փետրվարի 8-ի այս պայմանագիրը, չնայած իր բոլոր խոցելի կողմերին, չափազանց դժգոհությամբ ընդունվեց երիտթուրքերի կողմից, որոնք դա համարեցին ազգային ինքնավարության ոտնահարում և տհաճ նախադրյալ՝ կայսրության այլ ժողովուրդների խռովության համար:

Օսմանյան կայսրության բանակն ու նավատորմը նույնպես զերծ չէին եվրոպական ներկայությունից: Թուրքական բանակը հիմնականում գտնվում էր գերմանական ազդեցության տակ: Գեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսի գլխավորած ռազմական 70 հոգանոց պատվիրակությունը զբաղվում էր օսմանյան բանակի բարեփոխմամբ և ժամանակակից պայմաններին համապատասխանեցմամբ՝ վայելելով գործողությունների լիակատար ազատություն և բազում արտոնություններ: Անգլիական ազդեցության տակ էր գտնվում թուրքական նավատորմը՝ ադմիրալ Արթուր Լիմպուսի գլխավորած բարձրաստիճան սպայական կազմի առկայության պայմաններում: 1914թ. սկզբներին Կ. Պոլսի գերմանական և անգլիական ռազմական պատվիրակություններն ունեին գրեթե հավասար թվով անդամներ:[10]

Երիտթուքական կառավարությունը և «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը շատ լավ էին հասկանում, որ եվրոպական նման ներկայությունը կայսրության յուրաքանչյուր ոլորտում, ի վերջո, հանգեցնելու է նրա վերջնական քայքայմանը: Այդ պատճառով առաջնային և կենսական խնդիր էր դառնում եթե ոչ եվրոպական առկա դաշինքներից մեկի, ապա գոնե առանձին որևէ հզոր տերության հետ դաշինք կնքելու անհրաժեշտությունը: Այդպիսի մի տերություն կարող էր լիներ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան կամ նույնիսկ Ռուսաստանը, որոնք ռազմականորեն ունեին գրեթե հավասար ուժ և կարող էին պաշտպանել Թուրքիային մեկ ուրիշի ներխուժումից: Չեր խրախուսվում դաշինքը Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, կամ ավելի թույլ՝ Հունաստանի, Բուլղարիայի կամ Ռումինիայի հետ, որոնք չէին կարող պաշտպան հանդիսանալ Օսմանյան կայսրության համար: 1914թ. մայիս-հուլիս ամիսներին երիտթուրքերն ամբողջ ուժով լծվեցին այս գործին և բանակցություններ ունեցան Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարությունների հետ: Մեծ Բրիտանիան դեռևս 1911թ. թուրք-իտալական պատերազմի նախօրեին էր մերժել Թուրքիայի՝ դաշինք կնքելու առաջարկը, չնայած, այդ շրջանում Վ. Չերչիլը բավական թուրքամետ էր և գտնում էր, որ իր երկրի համար Թուրքիայի հետ դաշինքը շատ ավելի կարևոր է քան Իտալիայի հետ դաշինքը:[11] Մերժվում է նաև նավատորմի նախարար Ջեմալ փաշայի՝ Ֆրանսիային արված առաջարկը: Ռուսաստանի հետ դաշինք կնքելու մտադրությամբ Թալեաթի գլխավորած պատվիրակությունը մեկնում է Ղրիմ, որտեղ ռուսական կառավարությանը խոստանում են լուծել նեղուցների հարցը, եթե Ցարական կայսրությունը երաշխավորի Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը:[12] Սակայն Ռուսաստանը մերժում է թուրքական այս առաջարկը: Երիտթուրքերի առաջնորդները հավաքվելով Մեծ վեզիրի նստավայրում, որոշում են Բեռլինում գտնվող Էնվեր փաշային լիազորել բանակցել գերմանական կառավարության հետ՝ կայուն և երկարատև դաշինք կնքելու համար: 1914թ. հուլիսի 22-ին Էնվերը դեսպան Վանգենհեյմին

է ներկայացնում դաշինքի առաջարկը, սակայն այն դարձյալ մերժվում է: Երբ թվում էր թե Օսմանյան կայսրության դիվանագիտական մեկուսացումն այլևս փաստ է, քանզի եվրոպական և ոչ մի գերտերություն չէր համաձայնվում նրա հետ դաշինք կնքել, թուրքական առաջարկի մասին տեղեկանում է Գերմանիայի Վիլհելմ II կայզերը և հուլիսի 24-ին, երբ Ավստրիայի կողմից արդեն Սերբիային էր ուղարկվել վերջնագիրը, կարգադրում է Վանգենհեյմին անհապաղ բանակցություններ սկսել Բարձր Դռան հետ, քանի որ ստեղծված իրավիճակում Օսմանյան կայսրության հետաքրքրությունը Գերմանիայի հետ կայուն դաշինք կնքելու հարցում պետք էր լուրջ առավելություն համարել:[13]

Կ. Պոլսում անմիջապես սկսվեցին թուրք-գերմանական գաղտնի բանակցությունները: Թուրքական կողմից դրան մասնակցում էին Մեծ վեզիր և արտգործնախարար Սայիդ Հալիմը, ներքին գործերի նախարար Թալեաթը և ռազմական նախարար Էնվերը: Չնայած, Էնվերը վստահեցնում էր Վանգենհեյմին, թե «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև կառավարության մեծամասնությունը կողմ է այս դաշինքին, սակայն իրականում մեծ մասը, այդ թվում նաև նավատորմի նախարար Ջեմալը, տեղյակ չէին ընթացող բանակցություններից:[14] Հուլիսի 28-ին գերմանական կառավարությանն ուղարկվեց դաշինքի առաջարկը: Չնայած կայզեր Վիլհելմ II-ը կողմ էր դրան, բայց այն միանշանակ չէր ընդունվում կառավարական վերին շրջանակներում. այդ է պատճառը, որ Թեոբալդ Հոլվեգը հուլիսի 31-ին կարգադրեց Վանգենհեյմին ոչ մի պայմանագիր չստորագրել, մինչև թուքական կողմը պատրաստակամություն չցուցաբերի ռազմական գործողություններ ծավալելու Ռուսաստանի դեմ:

Օգոստոսի 1-ը թուրք-գերմանական բանակցությունների համար վճռորոշ էր: Դրանց ընթացքում քննարկվող հարցերի զգալի մասը մինչ այժմ անհայտ է, քանզի այն ընթանում էր գաղտնի պայմաններում, և շատ հարցերի շուրջ գրավոր արձանագրություններ չեն կատարվել: Երիտթուրքական կառավարությունը, որ գոնե այդ շրջանում այնքան էլ միտված չէր ներգրավվելու համաեվրոպական հակամարտության մեջ, կամ ավելի շուտ՝ թաքցնում էր դրա մեջ ներքաշվելու իրական նպատակները, փորձում էր դաշինքի անհրաժեշտությունը կապել ներքին բարեփոխումների իրականացման համար երաշխիքի հետ: Ինչպես Էնվերն էր վստահեցնում Վանգենհեյմին, դրանց իրականացումը հնարավոր կլինի միայն եթե Թուրքիան «ապահովված լիներ արտաքին հարձակումներից», իսկ դրա համար անհրաժեշտ էր «որևէ գերտերության աջակցությունը»:[15] Ակնհայտ է սակայն, որ Վանգենհեյմը տառացիորեն հետևում էր իր կառավարության հրահանգներին և պահանջում էր բանակցող երիտթուրք առաջնորդներից կոնկրետ առաջարկներ անել դաշինքի դրույթների վերաբերյալ: Թե ինչպիսի՞ կոնկրետ առաջարկներ են նրանք արել, դժվար է ասել, սակայն մի բան ակնհայտ է, որ Վանգենհեյմը, շատ լավ տեղյակ լինելով Թուրքիայի ռազմական դրությանը, հասկանում էր, որ Թուրքիան մինչև աշնան վերջ և նույնիսկ ձմռան սկիզբ ի վիճակի չէր լինելու ավարտել ընդհանուր մոբիլիզացիան և ռազմական գործողություններ սկսել: Մյուս

կողմից այդ շրջանում Գերմանիան վստահ էր, որ պատերազմն այքան կարճ էր տևելու, որ այն ավարտվելու էր նախքան Թուրքիան պատրաստ կլիներ ներքաշվել դրա մեջ: Այս պարագայում ավելի է կարևորվում այն հարցը, թե ի՞նչ կոնկրետ առաջարկ է դրվել բանակցությունների սեղանին, որ Վանգենհեյմը տվել է դաշինք կնքելու իր համաձայնությունը: Ուսումնասիրողների մի մասի կարծիքով որևէ կոնկրետ առաջարկ չի եղել, և գերմանական դեսպանը պարզապես չի հետևել ստացվող կարգադրություններին՝ կարծելով, որ թուրքական ցանկացած օժանդակություն կարող էր բարենպաստ լինել արդեն սկսված պատերազմում: Սակայն արդյո՞ք Կայզերական Գերմանիայի պես գերտերության դեսպանը, համաեվրոպական ճգնաժամի պայմաններում կարող էր ինքնակամ նման քայլի գնալ: Աներկբայորեն՝ ոչ: Չմոռանանք, որ ժամանակի գերիզոր ռազմանավը թուրքական «Սուլթան Օսման» ռազմանավն էր, որը ցանկացած ծովային ճակատամարտում կարող էր եղանակ փոխել: Արդյո՞ք հնարավոր չի կարելի համարել, որ հենց այս հաղթաթուղթն են Թալեաթն ու Էնվերը դրել բանակցությունների սեղանին: Առկա էր մի հանգամանք ևս, որի մասին գրեթե ոչ ոք տեղյակ չէր. թուրքական «Սուլթան Օսման» ռազմանավը, որ գտնվում էր անգլիական ափերին, հուլիսի վերջին բռնագրավվել էր Մեծ Բրիտանիայի կողմից, և այս մասին Էնվերը նույն բանակցությունների օրը գաղտնի կերպով տեղեկացրեց երիտթուրք մի քանի առաջնորդների:[16] Այս պարագայում ի՞նչը կարող էր խանգարել նրանց այդ գայթակղիչ առաջարկությունը Վանգենհեյմին անելու համար՝ լավ իմանալով, որ չեն կարողանալու այն իրականացնել և որևէ պատասխանատվություն չեն կրելու դրա համար: Բնական էր, որ գերմանական դեսպանը, տեղյակ չլինելով անգլիական կառավարության ընդունած որոշումից, անմիջապես ընդունեց այն, և 1914թ. օգոստոսի 2-ին Սայիդ Հալիմն ու Վանգենհեյմն իրենց ստորագրությունները դրեցին պայմանագրի դրույթների տակ, որոնցից մի քանիսը ստորագրության պահին արդեն արդիական չէին: Պայմանագրի առաջին և երկրորդ հոդվածները նախատեսում էին Օսմանյան կայսրության մուտքը պատերազմ Գերմանիայի կողքին, եթե վերջինս պատերազմեր Ռուսաստանի դեմ: Ինչպես գիտենք արդեն օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ էր հայտարարել Ռուսաստանին, և հասկանալի չէ, թե ինչո՞ւ օգոստոսի 2-ի պայմանագրում այդ կետը փոփոխության չէր ենթարկվել: Երրորդ հոդվածով Գերմանիան Թուրքիային էր թողնում գեներալ Լիման Սանդերսի ռազմական պատվիրակությունը, մինչև Բարձր Դուռն ի վիճակի կլիներ սեփական միջոցներով ղեկավարել իր բանակը: Չորրորդ հոդվածով Գերմանիան ապահովելու էր թուրքական սահմանների անվտանգությունը, իսկ ութերորդ հոդվածը նախատեսում էր պայմանագրի գաղտնիության պահպանումը, մինչև դրա ուժի մեջ լինելու ավարտը՝ 1918թ. դեկտեմբերի 31-ը:[17] Չնայած գաղտնիության այդ պայմանին, այն իրականում այդքան էլ գաղտնի չէր: Կ. Պոլսի ավստրիական դեսպանատունը դեռ մինչև պայմանագրի ստորագրվելն էր տեղյակ, որ նման պայմանագիր է պատրաստվում[18], իսկ լուրերը դրա մասին տարածվել էին ողջ Եվրոպայում: Բեռլինում Իտալիայի դեսպան Բոլատին արտգործնախարար Սան Ջուլիանոյին օգոստոսի 2-ին հղած իր հեռագրում գրում է, որ իրեն հասած տեղեկություն-

ների համաձայն Գերմանիան և Ավստրո-Հունգարիան բանակցել են Թուրքիայի հետ՝ վերջինիս Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներքաշելու ուղղությամբ, իսկ Կովկաս ուղարկվելիք թուրքական զորքերին գլխավորելու է Կ. Պոլսի գերմանական զինվորական պատվիրակությունը:[19]

Երիտթուրք առաջնորդներից շատերը պայմանագրի մասին տեղեկացան միայն դրա կնքումից հետո և, փաստորեն, բացի իրավիճակի հետ համակերպվելուց այլևս ոչինչ չէին կարող անել: Նրանց համար կարևոր խնդիր դարձավ Էնվերին անմիջապես մարտական գործողություններ սկսելու մասին որոշում կայացնելուց հետ պահելը: Նրանց կարծիքով Թուրքիան պետք է համբերեր, հետևեր դեպքերի ընթացքին, պարզեր Բուլղարիայի և Ռումինիայի դիրքորոշումները և հետո միայն որոշում կայացներ պատերազմի մեջ ներքաշվելու համար:[20] Տեղի տալով նման կարծիքներին, բայց և պարտավորված լինելով Գերմանիայի հետ պայմանագրով, թուրքական կառավարությունը օգոստոսի 3-ին ռազմական ուժերի ընդհանուր մոբիլիզացում հայտարարեց, որին հետևեց սակայն չեզոքության մասին որոշումը: Ժամանակ շահելու և Ռուսաստանի դիրքորոշումը պարզելու համար Էնվերը օգոստոսի 5-ին Ժիրեսին դաշինք կնքելու մասին առաջարկ արեց՝ Էգեյան կղզիների և արևմտյան Տրաչիայի դիմաց խոստանալով պատերազմի մեջ մտնել Անտանտի երկրների կողքին:[21] Օգոստոսի 9-ի իր զեկուցագրում Ժիրեսը Սազոնովին առաջարկեց ընդունել Էնվերի առաջարկը՝ կանխելու համար նրա մուտքը Գերմանիայի կողքին:[22] Սազոնովը տեղյակ լինելով, որ Թուրքիան արդեն Գերմանիայի հետ է և այդ առաջարկն էլ անշուշտ արվել էր վերջինիս հետ համաձայնեցված, մերժեց այն: Բացի այդ՝ թուրք-գերմանական հարաբերություններն այդ ընթացքում որակական նոր հարթության վրա էին գտնվում: Դեռևս օգոստոսի 1-ին թուրք-գերմանական բանակցությունների օրը համաձայնություն էր ձեռք բերվել գերմանական միջերկրածովյան նավատորմի երկու ռազմանավերը՝ «Գոեբենն» ու «Բրեսլաուն», նեղուցների միջոցով անցկացնել թուրքական ջրեր՝ հզորացնելու համար թուրքական սևծովյան նավատորմը: Այս պայմանավորվածությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ թուրքական կողմն անկասկած «Սուլթան Օսման» ռազմանավն էր առաջարկել Գերմանիային և վերջինս, վստահ լինելով, որ հյուսիսային ջրերում դրա առկայությունը չի թուլացնի իր հզորությունը, պատրաստ էր մյուս երկու նավերն ուղղել Սև ծով: Գերմանական կառավարությունը ոչ միայն Թուրքիային պարտադրում էր անհապաղ պատերազմի մեջ մտնել, այլ նաև անհանգստանում էր Թուրքիայի պասիվ վարքագծից: Արագացնելու համար նրա մուտքը պատերազմ, գերմանական կառավարությունը օգոստոսի 3-ին միջերկրածովյան նավատորմի ադմիրալ Վ. Սոուքոնին կարգադրեց անհապաղ վերոհիշյալ երկու ռազմանավերն ուղղել դեպի նեղուցները:[23] Երիտթուրք առաջնորդների տեսակետներն այս հարցում ևս բաժանվում էին: Չնայած նրան, որ Էնվերը Դարդանելի ռազմական իշխանություններին կարգադրեց բաց պահել նեղուցները գերմանական ռազմանավերի համար, Սայիդ Հալիմը օգոստոսի 4-ին Վանգենհեյմին խորհուրդ տվեց հետ կանգնել այդ քայլից, քանի որ Թուրքիան առանց Ռումինիայի և Բուլղարիայի դիրքորոշումը ճշտելու չի կարող ընդունել այդ ռազ-

մանավերը և պահանջեց, որպեսզի դրանք հեռու մնան նեղուցներից: Բեռլինից անմիջապես տեղեկացրին Սոուքոնին՝ չշարժվել դեպի նեղուցները: Վերջինս, որ արդեն դուրս էր եկել Սիցիլիայի ջրերից և գտնվում էր անգլիական նավերի շրջափակման մեջ, ոչինչ չէր կարող անել, եթե ոչ միայն անտեսել ստացված հրահանգը և շարունակել ընթացքը դեպի թուրքական ջրերը:

Օսմանյան կառավարությունը, որ մշտապես խուսափողական և իր շահերից բխող մարտավարություն էր իրականացնում, այս դեպքում ևս փորձեց առավելագույնը ձեռք բերել: Սայիդ Հալիմը օգոստոսի 6-ին Վանգենհեյմին տեղեկացրեց, որ կառավարությունը որոշել է ընդունել ռազմանավերը, սակայն անհրաժեշտ է երաշխիքների մասին նոր պայմանագիր կնքել: Ստեղծված իրավիճակում Վանգենհեյմին մնում էր միայն ընդունել թուրքական այս առաջարկը: Նախկին պայմանագրի կնքումից ընդամենը չորս օր հետո՝ օգոստոսի 6-ին, կնքվեց թուրք-գերմանական նոր պայմանագիրը, որի համաձայն Գերմանիան պարտավորվում էր.

1. Աջակցել Թուրքիային կապիտուլիացիայից ձերբազատվելու հարցում:

2. Աջակցել Թուրքիային դաշինք կնքել Բուլղարիայի և Ռումինիայի հետ:

3. Հաշտության պայմանագիր չկնքել, մինչև որ պատերազմի հետևանքով Թուրքիայի հնարավոր տարածքային կորուստները չվերադարձվեն:

4. Հունաստանի պատերազմի մեջ մտնելու և պարտվելու դեպքում Էգեյան կղզիները վերադարձնել Թուրքիային:

5. Ապահովել Թուրքիայի արևելյան սահմանների որոշակի փոփոխությունները՝ անմիջական ցամաքային կապ ստեղծելով Թուրքիայի և Ռուսաստանի մուսուլմանների միջև:

6. Փոխհատուցել Թուրքիայի պատերազմի ժամանակ կրած բոլոր վնասները:[24]

Այս պայմանագրի 1, 3 և 5-րդ հոդվածներն անմիջապես վերաբերվում էին նաև Հայաստանին ու հայ ժողովրդին: Եթե առաջին հոդվածով փաստորեն հօդս էին ցնդում բարեփոխումների հետ կապված որոշումները, եթե երրորդ հոդվածով արգելափակվում էին անկախ Հայաստան ստեղծելու, կամ Արևմտյան Հայաստանի տարածքները ռուսական Հայաստանին միացնելու հեռանկարները, ապա հինգերորդ հոդվածը պարզապես հող էր նախապատրաստում հայկական ցեղասպանությունն իրականացնելու թուրքական երազանքի համար:

Օսմանյան կառավարությունը, ոգևորված այս նոր պայմանագրով, հուսալով, որ վերջապես վերջ կդրվեն երկրի ներքին կյանքին խառնվող եվրոպական տերությունների միջամտություններին, որ Գերմանիայի հետ դաշինքն իրոք մեծ հաջողություն էր, քանի որ գերտերություններից միայն նա որևէ տարածքային հավակնություն չուներ թուրքական երկրամասում, իսկ մյուսներն ուղղակի ցանկանում էին մասնատել կայսրության ամբողջականությունը, ամեն դեպքում դարձյալ խուսափում էր մարտական գործողություններ սկսելուց: Ավելին, օգոստոսի 9-ին Սայիդ Հալիմը Վանգեն-

հեյմին տեղեկացրեց, որ Ռումինիայի կառավարությունից թուրք-հունական-ռումինական համատեղ չեզոքության մասին որոշում կայացնելու առաջարկ է ստացել, և որ թուրքական կառավարությունը մտադիր է այն ընդունել: Այդ նոր պայմաններում գերմանական ռազմանավերի մուտքը կդիտվեր որպես չեզոքության մասին միջազգային նորմերի կոպիտ խախտում, և Անտանտի երկրները հանգիստ կարող էին պատերազմ հայտարարել Թուքիային, որը դեռ պատրաստ չէ դրան, ուստի անհրաժեշտ է, որ Թուրքիան ձևականորեն գնի դրանք Գերմանիայից, բայց, անշուշտ, թողնելով ռազմանավերը գերմանական հրամանատարության իրավասության տակ: Հասկանալի է թե Թուրքիայի նման վարքագիծը ինչ արձագանք պիտի ստանար Բեռլինում, որտեղից կտրականապես մերժեցին Մեծ վեզիրի առաջարկը և Վանգենհեյմին կարգադրեցին բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու համար: Երիտթուրքական կառավարությունը հավատարիմ մնալով իր խորամանկ քաղաքականությանը, շարունակում էր անտեսել Գերմանայից ստացվող սպառնալիքները, իսկ Բարձր Դուռը պաշտոնապես հայտարարեց, որ «Գոեբենն» ու «Բրեսլաուն» 80 միլիոն ֆրանկով գնվել են գերմանական կառավարությունից, և երբ օգոստոսի 16-ին Ջեմալը Դարդանելում ընդունեց այդ ռազմանավերը, դրանց տվեց «Յավուզ Սուլթան Սելիմ» և «Միդիլլի» անունները, գերմանական նավաստիներին տրվեցին թուքական ռազմածովային համազգեստներ, իսկ Սոուքոնը նշանակվեց թուրքական սեծովյան նավատորմի ադմիրալ:[25]

Կայզերական Գերմանիան և Ավստրո-Հունգարիայի կայսրությունը շատ կցանկանային, որ Թուրքիայի նման քաղաքականությունը ստիպեր Անտանտի երկրներին պատերազմ հայտարարել Թուրքիային, որն ուզեր թե չուզեր, ստիպված կլիներ ներքաշվել մարտական գործողությունների մեջ: Սակայն Անտանտի երկրներն իրենց հերթին զգուշավորություն էին ցուցաբերում՝ կարծելով, որ Օսմանյան կայսրության գործողությունները համաձայնեցված են Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ, և որ այն վաղ թե ուշ մտնելու էր պատերազմի մեջ, իսկ այդ փուլում նրանց ձեռնտու էր Թուրքիայի չեզոքությունը և որոշել էին սպասել մինչև վերջինս կաներ առաջին քայլը: Լոնդոնում Իտալիայի դեսպան Իմպերիալին արտգործնախարար Սան Ջուլիանոյին օգոստոսի 10-ին հղած հեռագրում նշում է, որ Թուրքիայի մուտքը պատերազմ կատարյալ ձախորդություն կլինի վերջինիս համար, քանզի Կայսրության մասնատման հարցը, որ գոնե այսօր տերությունները չեն շոշափում, կդառնա օրակարգային խնդիր:[26]

Օսմանյան կայսրությունն իրականում հենց սրանից էր վախենում, և իր խուսափողական քաղաքականությունն էլ հենց կապված էր այս խնդրի հետ: Երիտթուրքական կառավարությունը սպասում էր որևէ վճռական ճակատամարտի, որպեսզի տեսներ, թե արդյո՞ք Գերմանիան կարող էր հաղթել Ռուսաստանին, քանզի վերջինս էր Թուրքիայի ամենավտանգավոր հակառակորդն ու սպառնալիքը: Խուսանավման քաղաքականության այս փուլում երիտթուրք առաջնորդները սպասում էին նաև Անտանտի երկրների առաջարկներին: Ծովային նախարար Ջեմալը, որ դեմ էր Գերմանիայի հետ դաշինքին, օգոստոս ամսվա ընթացքում շարունակում

էր բանակցությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ փորձելով համոզել նրանց, որ ռուսական ներխուժումն արգելող նրանց հստակ երաշխիքից է կախված Թուրքիայի հեռացումը Գերմանիայից: Սակայն Անգլիան և Ֆրանսիան, որ Ռուսաստանի դաշնակիցներն էին, բնական է, նման երաշխիք տալ չէին կարող, բայց խոստացան Թուրքիայի չեզոքության պահպանման դեպքում ապահովել կապիտուլիացիայի վերացումը, չխառնվել նրա ներքին խնդիրներին, վերադարձնել Անգլիայի կողմից բռնագրավված ռազմանավերը, Գերմանիայի կողմից Բուլղարիայի պատերազմ մտնելու դեպքում ապահովել արևմտյան Տրաչիայի վերադարձը Թուրքիային:[27]

Մինչ Ջեմալն այս բանակցությունների մեջ էր, Էնվերն իր կողմնակիցներով նոր, գաղտնի հանդիպումներ ունեցավ գերմանական զինվորական վերնախավի հետ՝ ընդհանուր մարտական ծրագիր մշակելու համար: Թալեաթն ու Հալիլը դարձյալ պնդեցին Բուլղարիայի և Ռումինիայի դիրքորոշումը ճշտելու անհրաժեշտությունը և մեկնեցին Բուխարեստ ու Սոֆիա: Անգլիական կառավարությունն այդ դաշինքը կանխելու համար բալկանյան երկրների ղեկավարներին առաջարկեց ստեղծել բալկանյան մի համադաշնություն, որի մեջ կմտնեին Բուլղարիան, Սերբիան, Ռումինիան, Հունաստանը և Մոնտենեգրոն և, համախմբելով ուժերը, հանդես գալ Անտանտի երկրների հետ միասին:[28] Սակայն ո՛չ անգլիացիներին հաջողվեց գլուխ բերել այդ ծրագրիրը, ո՛չ էլ Թալեաթն ու Հալիլը կարողացան որևէ դրական արդյունք ստանալ իրենց բանակցություններից:

Օգոստոսի 19-ին գեներալ Լիման Սանդերսն այլևս հույսը կտրած, որ Թուրքիան երբևէ կներքաշվի պատերազմի մեջ և ավելորդ համարելով իր ներկայությունը Թուրքիայում, դիմեց Վիլհելմ II-ին թույլ տալ՝ իր և իր ռազմական պատվիրակության վերադարձը Գերմանիա:[29] Սակայն գերմանական կայզերը մերժեց այդ խնդրանքը՝ պահանջելով սերտորեն համագործակցել Էնվերի հետ: Վերջինիս սիրաշահելու համար օգոստոսի 27-ին թուրքական բանակի գլխավոր հրամանատարությունը Լիմանին հանձնեց Էնվերին:[30] Այս նոր նշանակումը ոչնչով չփոխեց Թուրքիայի քաղաքականությունը՝ այն հավատարիմ էր մնում պատերազմի մեջ չմտնելու դիրքորոշմանը: Ավելին, շուտով Օսմանյան կառավարությունն այնպիսի քայլերի գնաց, որոնք զարմացրին նույնիսկ հենց իրենց՝ Թուրքիայի դաշնակիցներին: Սեպտեմբերի 9-ին Բարձր Դուռը որոշում կայացրեց կապիտուլիացիայից հրաժարվելու մասին, որն ուժի մեջ էր մտնելու հոկտեմբերի 1-ից:[31] Սա նշանակում էր, որ Թուրքիային միջազգային պայմանագրերով պարտադրված պայմաններն այլևս ուժի մեջ չէին: Կ. Պոլսում փակվեցին օտարերկրյա բոլոր փոստային ծառայությունները, օտարերկրացիները ենթարկվեցին օսմանյան օրենքներին, մաքսային վերահսկողությունը նույնպես անցավ կառավարությանը: Փաստորեն, Թուրքիան, առանց պատերազմի մեջ ներքաշվելու, օգտվելով ընձեռնված հնարավորությունից և հարմար առիթից, կատարեց իր գլխավոր երազանքներից մեկը, որի համար ցանկանում էր մտնել պատերազմի մեջ:

Չնայած նրան, որ թե՛ Եռյակ միության և թե՛ Անտանտի երկրները բողոքի նոտա հղեցին Բարձր Դռանը նման անօրինական քայլ կատարելու համար, բայց երկու կողմերն էլ, ելնելով իրենց շահերից, մեծ ճնշում չգոր-

ծաղրեցին այդ որոշումը չեղյալ հայտարարելու համար: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան այն համարեցին որոշակի կոնկրետ քայլ պատերազմի մեջ մտնելու ուղղությամբ, բացի այդ, դեռևս օգոստոսի 6-ի պայմանագրով էր Գերմանիան պարտավորվել աջակցել Թուքիային այդ հարցում: Անտանտի երկրներն էլ հուսալով, որ իրենց մեղմ վերաբերմունքը կստիպի Թուրքիային պահպանել չեզոքությունը, նույնպես վճռական քայլերի չդիմեցին, սակայն նրանք սխալվեցին իրենց հաշվարկներում: Արդեն սեպտեմբերի 14-ին Էնվերը լիազորեց Սոուքոնին իր տրամադրության տակ գտնվող ռազմանավերն ուղղել Սև ծով և ռմբակոծել ռուսական դիրքերը: Սայիդ Հալիմը, երբ իմացավ այդ մասին, կարգադրեց Էնվերին անհապաղ ետ վերցնել տված լիազորությունները: Տեղի տալով այս ճնշմանն Էնվերը ստիպված այն ետ վերցրեց, բայց ցույց տալու համար, որ դրանով թուրք-գերմանական դաշինքը չի թուլանում, սեպտեմբերի 26-ին նեղուցները փակ հայտարարեց օտարերկրյա բոլոր նավերի համար:[32] Չնայած՝ Սայիդ Հալիմը վստահեցնում էր Անտանտի երկրների դեսպաններին, որ անգլիական և ֆրանսիական ռազմանավերը հենց որ հեռանան նեղուցներից դրանք անպայման կվերաբացվեն, սակայն Թալեաթը Վանգենհեյմին վստահեցրեց, որ Սայիդ Հալիմն այլևս չի տնօրինում իրավիճակին և նրա ասածները պետք չէ լուրջ ընդունել, ուստի նեղուցները կշարունակվեն փակ մնալ:[33] Երիտթուրքական կառավարության բոլոր անդամներն արդեն հասկանում էին, որ նման պայմաններում պատերազմից խուսափել այլևս չի լինի, և փորձեցին ևս մեկ անգամ Գերմանիայից իրենց շահերից բխող պարտավորություն ստանալ: Ֆինանսների նախարար Ջավիդն Էնվերին խորհուրդ տվեց գերմանակն կառավարությունից գումար պահանջել սպառազինության և մարտական գործողություններին անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Էնվերն այս հարցում լիազորություններ տվեց Լոնդոնում Օսմանյան կայսրության դեսպան Մուխտառ փաշային, որն էլ Գերմանիայի արտաքին գործերի գրասենյակի գլխավոր քարտուղար Զիմեռմանի հետ հանդիպման ժամանակ հինգ միլիոն թուրքական լիր ոսկով գումար պահանջեց, խոստանալով անմիջապես մտնել պատերազմի մեջ: Բանակցողները համաձայնության եկան երկու միլիոնի շուրջ: Հոկտեմբերի 11-ին Էնվերը, Ջեմալը, Թալեաթը և Հալիլը Վանգենհեյմին տեղեկացրին, որ հենց գումարի առաջին խմբաքանակը հասնի Կ. Պոլիս, կարտոնեն, որպեսզի Սոուքոնը հարձակվի Ռուսաստանի վրա:[34] Հոկտեմբերի 17-ին և 21-ին խոստացված գումարները հասան Կ. Պոլիս, սակայն մինչև դրանց հասնելը երիտթուրք առաջնորդների մեջ տարաձայնություններ առաջ եկան: Թալեաթը, Ջավիդը և Հալիլը, որ մի քանի օր առաջ էին խոստացել Վանգենհեյմին պատերազմ սկսել, դարձյալ ետ կանգնեցին իրենց որոշումից և սխալ համարեցին նման քայլը, իսկ Էնվերն անդրդվելի էր և Սոուքոնին կարգադրեց հարձակվել Ռուսաստանի վրա, երբ հարմար կլինի: Հոկտեմբերի 29-ին Սոուքոնի գլխավորած նավատորմը ռմբակոծեց ռուսական դիրքերը Օդեսայում և Սևաստոպոլում:[35] Այս հարձակումը Կ. Պոլսում մեծ իրարանցում առաջացրեց: Հաջորդ օրը տեղի ունեցած կառավարության և կուսակցության ղեկավարների համատեղ նիստում Սայիդ Հալիմն ու Ջավիդը պահանջեցին անհապաղ ետ քաշել նավերը, սակայն «գնացքն արդեն շարժվել

էր», և քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությունը կողմ քվեարկեց պատերազմի մեջ ներքաշվելուն:[36] Ամեն դեպքում՝ որոշվեց ներողության նոտա հղել Ռուսաստանին՝ պարտավորվելով վճարել հասցրած վնասի համար:

Սազոնովը վերջնագիր ներկայացրեց Թուրքիային՝ երկրում գտնվող գերմանական ռազմական ողջ պատվիրակությանը հեռացնելու վերաբերյալ: Օգոստոսի 31-ին Անտանտի պետությունների դեսպանները լքեցին Կ. Պոլիսը, իսկ Սազոնովի վերջնագիրն էլ մնաց անպատասխան: Նոյեմբերի 2-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը, հաջորդ երկու օրերի ընթացքում նրան պատերազմ հայտարարեցին նաև Ֆրանսիան և Անգլիան:

Օսմանյան Կայսրության մուտքը պատերազմ հիանալի առիթ էր լուծելու նաև ազգային փոքրամասնությունների, մասնավորապես՝ հայ ժողովրդի հետ կապված խնդիրները, որոնց առկայությունը մեծ վտանգ էր ներկայացնում կայսրության ամբողջականությունը պահպանելու համար, և մշտապես օգտագործվում էր տերությունների կողմից՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրա ներքին կյանքին միջամտելու նպատակով: Այս տեսակետը հաստատում էր նաև Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին, ըստ որի Թուրքիայի մուտքը պատերազմ պայմանավորված էր լուծելու Արևելյան հարցը՝ հայկականը, եգիպտականը, նեղուցների ու Կ. Պոլսի խնդիրները, ինչպես նաև՝ կայսրության մասնտաումը կանխարգելելը:[37]

Հայ ժողովուրդը՝ ընդհանրապես և նրա քաղաքական կուսակցությունները՝ մասնավորապես, որ աջակցել էին երիտթուրքական հեղափոխությանը, հավատում էին նրա գաղափարներին՝ հավասարություն, եղբայրություն, ազատություն, սահմանադրություն և այլն: Սակայն երիտթուրք առաջնորդները հենց սկզբից էլ գիտեին, որ իրականում ոչ մի հավասարության կամ իրավունքների մասին խոսք լինել չի կարող: Դեռ 1908թ. հոկտեմբերին երիտթուրք առաջնորդներից Ջահիդ Հուսեինը, որ 1909 թվականին ստանձնեց երիտթուրքական կառավարության ֆինանսների նախարարի պաշտոնը, հայտարարում էր, որ չի կարելի խոսել լիակատար հավասարության և ազատության մասին, առանց հաշվի առնելու ազգությունն ու կրոնը:[38] 1909թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները որոշ չափով թուլացրին հայ ժողովրդի հավատը երիտթուրքական իշխանության նկատմամբ, սակայն նույն թվի սեպտեմբերի 6-ին համագործակցության նոր պայմանագիր կնքվեց ՀՅԴ և երիտթուրքական կուսակցության միջև, իսկ Վառնայում ընթացող ՀՅԴ հինգերորդ համագումարը վերահաստատեց իր աջակցությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը:[39]

1910թ. օգոստոսին Սալոնիկում կայացավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկրորդ համագումարը, որտեղ բացի բաց նիստերից տեղի էին ունենում նաև գաղտնի հանդիպումներ ու քննարկումներ: Դրանցից մեկի ժամանակ Թալեաթը հայտարարեց. «Չնայած, որ սահմանադրության համաձայն հավասարություն է հաստատված մուսուլմանների և գյավուրների (անհավատների) միջև, բայց բոլորդ էլ հասկա-

նում եք, որ այդ գաղափարն անիրագործելի է: Շարեաթը, մեր պատմական անցյալն ու հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները անհաղթահարելի են դարձնում իրական հավասարությունը: Ուստի չի կարող հավասարություն լինել, մինչև չավարտենք Կայսրության օսմանացումը»:[40]

Բալկանյան պատերազմներում Թուրքիայի կրած ծանր պարտությունն ու եվրոպական տարածքների կորուստները ապացուցեցին, որ օսմանիզմի քաղաքականությունն արդյունավետ չէ, և երիտթուրքական կառավարության առջև ծառացավ նոր գաղափարախոսություն որդեգրելու անհրաժեշտությունը: Ժամանակի թուրք մտավորականները՝ Զիյա Գյոկալպ, Յուսուֆ Ակչուրա, Մունիս Թեկին Ալպ և այլոք, լծվեցին այդ նոր գաղափարախոսության ստեղծման գործին, որի արդյունքում առաջ եկան թուրքիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունները, Թուրքիան՝ թուրքերին կարգախոսով: Կայսրության մյուս ժողովուրդները դատապարտված էին կամ թուրքացվելու, կամ՝ ոչնչացվելու: Ինչպես հայտնի է՝ պանթուրքիզմի գլխավոր նպատակը Մեծ Թուրանի ստեղծումն էր, որի սահմանները պետք է տարածվեին Ճապոնիայից մինչև Սկանդինավյան լեռներ, Հյուսիսային օվկիանոսից մինչև Թիբեթյան բարձրավանդակ:[41] Ահա այս գաղափարախոսությամբ էլ Օսմանյան կայսրությունը ներքաշվեց պատերազմի մեջ՝ իրագործելու դրան հասնելու նպատակները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Howard H. The partition of Turkey. A diplomatic history 1913-1923, New York. 1966. pp. 57-58.
[2] Temon Y. Gli Armeni, Milano, 2003, p. 195.
[3] Fromkin D. Una pace senza pace, Milano, 2002, p. 51.
[4] Impagliazzo M. Una finestra sul massacro, Milano, 2000, p. 22.
[5] Sidari F. La questione armena nella politica delle grandi potenze, Padova, 1962, p. 51.
[6] Նույն տեղում, էջ, 55:
[7] Pamiankowski J. Il tramonto dell'Impero Ottomano, Milano, 1934, p. 170.
[8] Temon Y. Gli Armeni, Milano, 2003, p. 198.
[9] Dadrian V. Storia del genocidio armeno, Milano, 2003, p. 241.
[10] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 13.
[11] Fromkin D. Una pace senza pace, Milano. 2002, p. 54.
[12] Howard H. The partition of Turkey. A diplomatic history 1913-1923, New York. 1966, p. 72.
[13] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 15.
[14] Fromkin D. Una pace senza pace, Milano 2002, p. 65.
[15] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 19.
[16] Fromkin D. Una pace senza pace, Milano 2002, p. 68.
[17] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 16.
[18] Pamiankowski J. Il tramonto dell'Impero Ottomano, Milano, 1934, p. 71.
[19] Documenti Diplomatici Italiani, Roma, 1954, V seria, vol. I, doc. N 8, p. 6.
[20] Macfie A. The end of the Ottoman Empire 1908-1923, London, 1998, p. 122.
[21] Cilibrizzi S. Storia Parlamentare, Politica e Diplomatica d'Italia, Napoli, 1940, vol. V, p. 44.

[22] Նույն տեղում:
[23] Fromkin D. Una pace senza pace, Milano 2002, p. 69.
[24] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 28.
[25] Shaw S., Shaw E. History of the Ottoman Empire and modern Turkey, Cambridge, 1977, vol. II, p. 312.
[26] Documenti Diplomatici Italiani, Roma, 1954, V seria, vol. I, doc. N 167, p.94.
[27] Macfie A. The end of the Ottoman Empire 1908-1923, London, 1998, p. 124.
[28] Fromkin D. Una pace senza pace, Milano 2002, p. 83.
[29] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 33.
[30] Cilibrizzi S. Storia Parlamentare, Politica e Diplomatica d'Italia, Napoli, 1940, vol. V, p. 45.
[31] Pamiankowski J. Il tramonto dell'Impero Ottomano, Milano, 1934, p. 79.
[32] Shaw S., Shaw E. History of the Ottoman Empire and modern Turkey, Cambridge, 1977, vol. II, p. 312.
[33] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 47.
[34] Macfie A. The end of the Ottoman Empire 1908-1923, London, 1998, p. 125.
[35] Նույն տեղում, էջ 126:
[36] Trumpener U. Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, p. 56.
[37] Hovannisian R. Looking backward moving forward, New Brunswick, 2003, p. 34.
[38] Ternon Y. Gli Armeni, Milano, 2003, p. 180.
[39] Նույն տեղում, էջ 174:
[40] Dadrian V. Storia del genocidio armeno, Milano, 2003, pp. 208-209.
[41] Hovannisian R. The Armenian genocide. History, politics, ethics, Basingstoke: Macmillan, 1992, p. 68.

Резюме

Вход Турции к Первой мировой войне: мотивации и цели.
Араманс Балоян

В статье рассматриваются вопросы довоенной ситуации в Османской империи, политики Великих держав в отношении Турции и Армянского вопроса. Будучи полностью под влиянием Европейских держав, имея провлемы с национальными меньшинствами в пределах империи, правительство младотурок пыталось использовать вхождение в войну как превосходную возможность, чтобы решишь все эти провлемы. В статье подчеркнуты все те мотивации и цели, которые вели Османскую империю к войне. Армянский вопрос, довоенные переговоры относительно реформ в Армянских вилайетах были большой угрозой для империи и могли вести к ее разделению, поэтому, война оказалась хорошим шансом для младотурецкого правительства для окончательного разрешения этой провлемы, путем организации и выполнения резни всего армянского населения империи.

Summary

The Entry of Turkey into the World War I: the Motives and Goals.
Aramais Baloyan

The present article hoghlights the pre-war situation in the Ottoman Empire, the policy of Great Powers reigning there and discloses the discussions on

the Armenian question taking place at that time. Being completely under the influence of the European Powers, having problems with the national minorities within the Empire, the Young-Turks' government could use the entering to the war as an excellent opportunity to resolve all these problems. Thus, in my article I have tried to underline all the motivations and aims which could account for the Ottoman Empire the entrance into the war. The Armenian question, the pre-war negotiations on the reforms in the Armenian vilaets were a great danger for the Empire and thus, could lead to its partition, therefore, the war turned out to be a good chance for the Young-Turks' government to definitely settle the problem by organizing and fulfilling the brutal massacre of the whole Armenian population of the Empire.